

«Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EaP Green) «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ցուցադրական ծրագիրը (ՌԱՄԱ) Հայաստանում Ծրագրի արդյունքները

(հոդվածների շարք «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ծրագրի վերաբերյալ)

Հայաստանում ՌԱՄԱ ծրագրի պոտենցիալ տնտեսական տարեկան խնայողությունները՝ 1,000,000 եվրո:

Ֆինանսական խնայողություններ (2017թ. հոկտեմբեր). Փաստացի տարեկան խնայողություններ՝ 120,000 եվրո, ֆինանսական ռեսուրսների ներգրավում՝ 50,000 եվրո մասնավոր ներդրումներ մաքուր տեխնոլոգիաների համար:

Ռեսուրսների խնայողություններ. Էներգիայի օգտագործման կրճատում 696 ՄՎտժ / տարի, ջրի օգտագործման կրճատում 490 տոննա / տարի, էլակրթների օգտագործման կրճատում 340 տոննա / տարի:

Աղտոտման նվազեցում. Ածխաթթու գազերի արտանետումներ՝ 200 տ CO₂equiv. / տարի, կեղտաջրեր՝ 459 մ³ / տարի և թափոններ՝ 410 տոննա / տարի:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EaP Green) «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ցուցադրական ծրագիրը (ՌԱՄԱ) Հայաստանում իրականացվել է 2014-2017 ժամանակահատվածում:

ՌԱՄԱ ծրագիրը միտված է բարելավել ՓՄՁ-ների բնապահպանական գործունեությունը և ռեսուրսների արդյունավետությունը՝ դրանով իսկ նպաստելով կայուն արդյունաբերական զարգացմանը, զբաղվածության ու եկամուտների մակարդակի բարձրացմանը:



ՌԱՄԱ ծրագրի նպատակն է բարելավել ռեսուրսների արդյունավետությունը և բնապահպանական գործունեությունը մասնավորապես գյուղատնտեսական, սննդի, քիմիական և շինարարական նյութերի արտադրության ոլորտներում: Ծրագիրը իրականացվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ:

ՌԱՄԱ ծրագրի շրջանակներում կազմակերպված ազգային կոնֆերանսների, համաժողովների, «Կանաչ ակումբների» և բազմաթիվ այլ միջոցառումների ժամանակ Հայաստանում ՌԱՄԱ ցուցադրական բաղադրիչը բարձր գնահատական է ստացել, այդ թվում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից և այն կօգտագործվի որպես ԵՄ հաջողված պատմություն:

ՌԱՄԱ փորձնական ծրագիրը Հայաստանում ցուցադրեց թե ինչպես սահմանափակ և չափավոր ֆինանսավորմամբ, ԵՄ հարկ վճարողների դրամական միջոցներով, հնարավոր է ստանալ դրական արդյունքներ հայաստանյան ՓՄՁ-ների համար:

Ծրագրում ներառված են Երևանը և ՀՀ 10 մարզերից 8-ը

Հիմնական ցուցանիշներ ըստ ՌԱՄԱ ոլորտների



Ծրագիրը համակարգումը իրականացվել է ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականություն մշակող և իրականացնող, գործադիր իշխանության հանրապետական մարմինը՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը:

ՌԱՄԱ շահառուների վերջին, 2016թ. օգոստոսի 30-ին կայացած, վեցերորդ համաժողովի ժամանակ, ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ պարոն Խաչիկ Հակոբյանն ընդգծեց Հայաստանում ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի կարևորությունը, մասնավորապես՝ ազգային թիմի դերը, որն աշխատում է կանաչ տնտեսական մեխանիզմների և նորարարական գաղափարների վրա:

Պարոն Հակոբյանը շնորհակալություն հայտնեց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը՝ ՌԱՄԱ ծրագրին շարունակական աջակցության համար, ընդգծելով ՌԱՄԱ շրջանակներում նախարարության և ԵՄ միջև հաջող համագործակցությունը:

Նախարարի տեղակալն ամփոփելով աշխատանքները, բարձր գնահատեց ծրագրի արդյունքները և միաժամանակ տեղեկացրեց, որ ծրագրի հիման վրա կստեղծվի «Կանաչ տնտեսագիտության ազգային կենտրոն», որն արդեն ներկայացվել է ՀՀ կառավարությանը:

Ծրագրի հիմնական ցուցանիշներ

Ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին ընդգրկվել են բազմաթիվ ՓՄՁ-ներ, անհատ ձեռնարկատերեր և այլ շահառուներ:


- Առաջին ՌԱՄԱ ազգային կոնֆերանս (48 մասնակից)
- Իրազեկման սեմինար Դիլիջանում (23 մասնակից)
- «Կանաչ ակումբի» մոդուլների վերաբերյալ սեմինարներ 4 քաղաքներում, (47 մասնակից)
- «Կանաչ ակումբի» պարզևատրման արարողություն (50 մասնակից),
- Հայաստանում վերապատրաստվել և հավաստագրվել են 24 ՌԱՄԱ փորձագետներ
- Համապարփակ ՌԱՄԱ ուսումնասիրություններ են իրականացվել 5 ՓՄՁ-ում
- Արարատ, Տավուշ, Կոտայք և Լոռու մարզերում կազմակերպված 4 «Կանաչ ակումբներում» ընդգրկված են 33 ՓՄՁ
- Իրազեկման սեմինար Արարատ քաղաքում (54 մասնակից)
- ՌԱՄԱ համաժողովների շարք՝ 6 ֆորումից (240 մասնակից)
- Երկու վեբինար (30 մասնակից)
- Կրթական մոդուլներ (35 մասնակից)
- Վերապատրաստում՝ մոնիտորինգի սարքավորումների վերաբերյալ (29 մասնակից)
- ՌԱՄԱ մեթոդների կիրառմամբ, փորձական 22 ՓՄՁ-ի տրամադրվել է գործունեության արդյունավետության բարձրացման խորհրդատվություն, և գործնական առաջարկություններ
- Արագ ՌԱՄԱ ատլիտ է իրականացվել 28 ՓՄՁ-ում
- ՌԱՄԱ ազգային ամփոփիչ կոնֆերանս (50 մասնակից)

Հայաստանում ՄԱԱԶԿ ծրագրերի ղեկավար տիկին Անահիտ Սիմոնյանը պարբերաբար նշել է, որ ՌԱՄԱ ծրագրի, համաժողովների և «Կանաչ ակումբների» առաջնային նպատակն է երկրում ստեղծվել և ձևավորել ՌԱՄԱ մշակույթը, ՌԱՄԱ արտադրական գործընթացում և հատկապես ՓՄՁ-ներում:


Միջգերատեսչական համագործակցությունը, նախագծի առանձնահատկություններից և ուժեղ կողմերից է՝ այն իրականացվել է ոչ միայն ՀՀ բնապահպանության նախարարության, այլև Գյուղատնտեսության, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, Տնտեսական զարգացման և ներդրումների, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, գործատուների միությունների, քաղաքացիական հասարակության, «կանաչ տնտեսության» խթանմանն ուղղված քաղաքացիական հասարակության, և ազգային փորձագետներ համագործակցությամբ:

ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի համակարգող, ԿՏԲԿ տնօրեն տիկին Նունե Հարությունյանը և ծրագրի ազգային փորձագետները, ծրագրի ընթացքում կայացած բոլոր հանդիպումների ժամանակ, մշտապես տեղեկացրել են հոգաբարձուների և շահառուների կողմից բարձրացրած խնդիրների և առաջարկությունների մասին: Դրանք հիմնականում ներառում են ուսումնական ծրագրերում ՌԱՄԱ փորձի ներդրման պահանջ, ՌԱՄԱ մեթոդների օգտագործում որպես կրթական և իրազեկման բարձրացման օգտակար գործիք, ներդրումների խրախուսման մեխանիզմների ստեղծում, ՌԱՄԱ ծառայությունների խթանում, ՓՄՁ-ների և անհատ ձեռնարկատերերի տեղեկացվածության բարձրացում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման լուծումների օգուտների գովազդում, ՌԱՄԱ մեթոդաբանության օգտագործում տնտեսության «կանաչացման» նպատակով և այլն:

Առաջարկված ՌԱՄԱ միջոցառումները



Ներդրումների վերադարձը ՓՄՁ-ներում



Ազգային կոնֆերանսի ժամանակ, որը կազմակերպված էր 2017թ. մայիսի 18-ին տիկին Հարությունյանը ամփոփելով ծրագրի արդյունքները, ներկայացրեց հիմնական խնդիրները և առաջիկա անելիքները: Շնորհակալություն հայտնելով բոլորին՝ շարունակական աջակցություն, գործնական առաջարկությունների և դրական արձագանքի համար, նշեց, որ դեռևս շատ աշխատանք կա անելու, և հույս հայտնեց, որ աշխատանքները կշարունակվեն, բերելով նոր հաջողակ պատմություններ և լրացուցիչ օգուտներ Հայաստանի համար:

ՌԱՄԱ փորձնական ծրագիրը շատ կարևոր է գործարար մարդկանց մտածելակերպի փոփոխության, իրազեկվածության մակարդակի բարձրացման և ՓՄՁ-ների համար ՌԱՄԱ ծառայություններ մատուցելու

առումներով, որը ուղղված է բիզնես գործընթացի օպտիմալացմանը, արտադրական պրոցեսների կառավարման կատարելագործմանը, արդյունավետության բարձրացմանը, տնտեսական և ռեսուրսների կորուստների կրճատմանը:

Ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների օրինակներ

ՌԱՄԱ միջոցառման բնապահպանական օգուտը. Նյութերի ընտրություն, արդյունավետ օգտագործում և թափոնների կրճատում ու վնասագերծում՝ ՀՀ, Արարատի մարզի, Արարատ քաղաքում, հրուշակեղենի արտադրությամբ զբաղվող «Արմինաշոկ» ՍՊԸ ում:



ՍՊԸ-ում կարողացել են հետ վերադարձի հաշվին (մոտ 10% ընդհանուր արտադրանքի ծավալից), ապահովել նոր արտադրատեսակների ստացում: Հետ վերադարձված լավաշից և մատնաքաշ հացատեսակից ՌԱՄԱ «Կանաչ ակումբների» դասընթացների և նախնական գնահատումների արդյունքում արված առաջարկների հիման վրա ներդրվել է պաքսիմատի արտադրություն: Ձեռք են բերվել սարքավորումներ (մոտ 4000 եվրո արժողությամբ) և արդեն իսկ կնքված են պաքսիմատի մատակարարման պայմանագրեր, փաթեթավորված արտադրատեսակը նաև առկա է վաճառարահներում: Արդյունքում հետ գնման ժամկետը կազմել է շուրջ երկու տարի:

ՌԱՄԱ միջոցառման բիզնես օգուտը՝ ծախսերի նվազեցում, կազմակերպչական արդյունավետություն, գործելու ազատության աստիճանի ընդլայնում, ՌԱՄԱ կիրառված գործիքները բարելավված տնտեսվարում և մուտքային նյութերի փոփոխում:

ՌԱՄԱ միջոցառման բնապահպանական օգուտը. Ջրի աղբյուրի ընտրության և արդյունավետ օգտագործում, կեղտաջրերի նվազեցում և վերամշակում՝ ՀՀ, Լոռու մարզի, Վանաձոր քաղաքում, շինանյութերի արտադրությամբ զբաղվող «Մարտին Թովմասյան» ԱԶ-ում



Դեկորատիվ սալիկների արտադրությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերը ցեմենտավազային խառնուրդը ստանալու համար որպես ջրի աղբյուր ընտրել է անձրևաջուրը: Օգտագործելով Վանաձոր քաղաքի անձրևաջատ կլիման անհատ ձեռնարկատերը ստեղծել է ջրահավաք մի համակարգ, որի միջոցով անձրևաջուրը կուտակվում է 2 տոննա տարողության բաքում և այնուհետև օգտագործվում արտադրական պրոցեսում: Կուտակված ջուրը բավարարում է ներկայիս արտադրության պահանջարկը և այդ նպատակների համար քաղաքային ջրատարից ջուր չի օգտագործվում:

ՌԱՄԱ բիզնես օգուտը՝ արտադրողականության բարձրացում, կազմակերպչական արդյունավետություն, գործելու ազատության աստիճանի ընդլայնում, ՌԱՄԱ կիրառված գործիքները բարելավված տնտեսվարում, մուտքային նյութերի և տեխնոլոգիայի փոփոխում:

ՌԱՄԱ միջոցառման բնապահպանական օգուտը՝ Էներգիայի աղբյուրի ընտրություն և արդյունավետ օգտագործում, օդային ավազան արտանետումների նվազեցում՝ ՀՀ Արագածոտնի մարզի, Աղձք համայնքում Զվի արտադրության բնագավառում գործող «Աշտարակ ձու» ՍՊԸ-ում:



Ընկերությունում իրականացվել են էներգիայի արդյունավետ օգտագործման մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ էներգիայի աղբյուրի փոփոխության միջոցով: Թոշնանոցների և օժանդակ տարածքների ջեռուցումն իրականացվում է բնական գազով էլեկտրական էներգիայի փոխարեն (տարեկան ֆինանսական խնայողությունը 750,000 դրամ): Արտաքին լուսավորման համակարգում սնդիկային լամպերը փոխարինվել են էներգաարդյունավետ, լուսադիողային լուսատուներով (էներգիայի ծախսերի կրճատումը մինչև 330,000 դրամ): Ջերմամեկուսացվել են թոշնանոցների արտաքին պատող կոնստրուկցիաները (տարեկան ֆինանսական խնայողություն 250,000 դրամ):

ՌԱՄԱ բիզնես օգուտը՝ ծախսերի նվազեցում, կազմակերպչական արդյունավետություն, ՌԱՄԱ կիրառված գործիքները բարելավված տնտեսվարում, մուտքային նյութերի փոփոխում, սարքավորումների մոդիֆիկացում և տեխնոլոգիայի փոփոխում:

ՌԱՄԱ ծրագրի, համաժողովների, կոնֆերանսների, «Կանաչ ակումբների», «Արդյունավետ ու մաքուր բիզնեսի ուղեցույցի» վերաբերյալ (անգլերեն և հայերեն տարբերակներով) հետաքրքրաշարժ և լրացուցիչ տեղեկատվություն կարող եք կարդալ և ներբեռնել այցելելով www.recp.am և www.rec-caucasus.am կայքերը: Միաժամանակ կարող եք ծանոթանալ ՌԱՄԱ ծրագրի շրջանակներում իրականացված այլ գործունեությանը (հասցե՝ Երևան, Այգեստան փողոց 7, շենք 2):

ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ազգային համակարգող Լուսնե Հարությունյան
ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ազգային փորձագետ Դշխուհի Սահակյան
ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ազգային փորձագետ Տիգրան Մեկոյան